76. ԽԵԼԱՑԻ ՀՈՎԻՎ

Կէզնի, չէզնի թագավոր մի։ Էդ թագավոր տարին անգամ մի զուր սադրազամ կսպանե, զմալ ու զկնիկ կքաշե, կտանե ուրին։

Էդ թագավոր մեկ օր կկանչե զուր մեծեր ու կըսե.—Իմ քաղքի բոլոր բադան մի քաշեք։

Վեզիրն ու մեծավորներ կանչեցին պատ շարող ուստեք, թամբիհ էրեցին ուրանց, օր էրթան քաղքի բոլոր բադան քաշին։ Ուստեք գացին տարիմ՝ էրկու աշխատան, զէդ բադան շինեցին։ Բադան շինեցին, դոներ կախեցին վրեն, գացին թագավորին խաբար էնեցին, թե՝ բադներ շինվավ, խըլըսավ։ Թագավոր լէ կանչեց զուստեք, ընդրանց մեկ-մեկ խըլաթ տվեց ու ճամփեց։

Քընան։ Առավոտ հ'էլան, տեսան օր բադներ հ'ըմեն բըլած է։ Գացին թագավորին խաբար էրեցին թե.—Թագավո՛ր ապրած, քաղքի բադներ հ'ըմեն բըլած է։

Թագավոր կկանչա զուստեք, կըսե թե.—Իմա՞լ շինեցիք զբադներ օր հ'ըմալ բլան։ Էս անգամին կէրթաք հ'ըմալ պիտի շինեք օր չը բլի, թե չէ, ձեր գլուխ կզարկիմ։

Ուստեքն է, կիգան էս անգամին, հ'ըմալ գաճ ու կրով մոհքամ մի կշինին զբաղներ իրեք տարի թամամ ու զդոներ կկախին վրեն։

Կէրթան թագավորին խաբար կիտան, թե բադներ շինվավ, խըլսավ։ Թագավոր կկանչե զուստեք, կասե.—Դե՛, էլեք էրթանք, տեսնանք, թե իմա՞լ եք շինե։

Կառնե զուր վազիրն ու զուր մեծավորներ ու զուստեք, կիգա բադներու բոլոր կօլորգի, կիշե օր գաճ ու կրով աղեկ մի շինած են մարդիկ։ Կհարցու ըդրանց.—Հըմեր ի՞նչ խըդար խորնկցուցիք։

Կասին.—Էրկու բաժ փորեցինք, իշանք քարի վրա, սորա հիմք թալեցինք։

— Էհ,—թագավոր կըսա,—օր հըմալ ա, աղեկ ա, բան մը լէ չէղնի։

Կքնին, լուսուն կէլնին կտեսնան օր բադներ գլխեց գլուխ բըլեր է։

Թագավոր կըսե.—Ջանը՛մ, էդ ուստեք ուղուրսուղ են, ըդրանց շինած հիմք չըբռնե։ Բերեք զդրանց գլուխ զարկինք։

Վեզիր կվերու կըսե.—Թագավոր ապրած կէնա, գլուխ զարկելով չէղնի, թե ըդրանց գլուխ զարկինք, էլ մարդ չենք կեռնա գըտնա օր շինին, չումքի ուրանց վախեն մեկ չի գա։

— Ապա իմա՞լ էնինք։

Կըսե.—Էդ ուստեք թըղ մընան, ուրիշ ուստա բերինք, էդոնց տանք շինել։

Կէլնի վազիր կճամբցու, ուրիշ էրկրե աղեկ ուստեք բերել կիղա։ Թամբիհ կընե ուստեստանուն, թե էրկու դիր իդա բադներ շինվավ ու էրկու դիր լէ բլավ, հիմք չբռնեց, իդ անգամին, ձեզի տեսնամ հըմալ շինիք զէդ բադներ օր էլ հազար տարի էրթա՝ չբլի։

Էդ ուստեքն է, հըմքերն կքանղին կիշուն քարերու վրա։ Կկանչին վազիրին, կըսին.—Վազի՛ր, արի տես, զհիմք իշցիր ինք քարի վրա, էլ տակ կակուղ չմանցեր ի, կուզիս թագավոր լէ կանչէ, թըխ հ իգա տեսնա օր չըսե, թե զհիմքեր աղեկ չիշեր իք։

Թագավոր լէ կիգա, ուր աչքով կտեսնա օր հ՚իշեր է քարի վրա։ Թագավոր կըսե.—Դե՛, շինեք, իշալլահ, էս անգամին բան չէղնի։

Ուստեք բաշլամիշ կէնին շինել էս անգամին։ Չորս տարի թամամ կաշխատին, անշախ գլուխ կբերին, զդուռկեք կկախին վրեն։

Ճուհաբ կտանին թագավորին, թե.—Բադներ խըլըսիր է, սրի սեյր էրե։

Թագավոր կէլնի կառնե զուր վազիր ու զուր մեծ-մեծ մարդիկ, կհեծնան զուրանց ձիանք ու կիգան էդ բադներու չորս բոլոր աղեկ մի սեյր կէնին։

Թագավոր կիշե, կտեսնա օր բաղներ հ'առեջ, թե էրկու հալապի լենք էր, մըկա էրած են չորս հալապի։ Թե էն ժամանակ գաճ ու կրով մինակ շինած են, մըկա համ գաճ ու կրով են շինած, համ երկաթներով լէ կապած են։

Թագավոր կդառնա ուր վազիրին ու մեծավորներուն կըսա թե.—Էս անգամին էդ բաղներ բլավ, էլ իդա ուստեստանուն մեղք չիկա։

Ու կէրթան, կքնին։ Հ'առավոտ կէլնին կտեսնան բաղներ թամամ գլխեց գլուխ շրջեր է, մեկ թիզ տեխ սալամաթ չմանցեր է։

Թագավորին շուհաբ կէրթա թե.—Վալլա՛, բաղներ էլման բլիր է։

Թագավոր կկանչե զուր վազիրին, կասե.—Վազի՛ր, կկանչիս մըր քաղքի գիտուններ, կքոմիս իրարու վրեն, զէդ բանի մանեն կհասկնաս, տեսնանք, թե հ'ո՞րին էդ բաղներ հիմք չբռնե։

Վազիրն էր, էլավ զուր քաղքի աղեկ գիտուններ ղըմեն քոմեց զուր հ'օդեն, ըսեց.—Թագավոր ձեզնե կուզե՝ իդա բաղներ հիմք չբռնելու մանեն։

Ըդրանք իրարու մեջ խոսացին, միտք էրեցին, միտք էրեցին, միտք էրեցին, միտք էրեցին, մեկ՝ հ'ըմլա ըսեց, մեկ՝ ուրիշ բանըմ՝ ըսեց. ըդրանց մեջ մեկ խելոք մէ կեր, թռավ ըսեց.—Ես գինամ, հ'ո՞րին ըդ բաղներ հիմք չեն բռնի։

Ըսին.—Օր գինաս, ըսե, տեսնանք ի՞նչ է։

Ըսեց.—Հ'ըմալ անխելք մարդ մի գտեք, օր քընց զէնի անխելք մարդ չէզնի։ Բերեք մորթեք քաղքի բաղնի շեմքի վրեն ու ընդրա ըռքի քարեր բերեք, իրեք կաթ արուն թալեք ըդ քարերու վրեն ու թալեք հըմքերու տակ ու զբաղներ շինեք վրեն, էլ խիամըթին չբլի։

Վազիր գնաց թագավորին շուհաբ տարավ թե.—Խելոք մարդըմ կեր ըդ մարդերուն մեջ, ըսեց. «Գացեք անխելք մարդ մի գըտեք, որ քընց զէնի անխելք մարդ մի չէզնի, բերեք, բաղնի շեմքի վրեն զէնի մատղեք ու բաղնի հըմքի ըռքի քարերու վրա իրեք-իրեք կաթ արուն թափեք ու թալեք հըմքի տակ, բաղներ շինեք վրեն, էլ խիամթին չբլի»։

Թագավոր ըսեց.—Օր հ'ըմալ է, հինգ մարդ հանեք, թըխ էրթան օլորդին, քու ասած անխելք մարդ գտնան, բերին մատղին բաղնի շեմքի վրա։

Վազիր էլավ հինգ մարդ ճամբցուց, ըսեց.—Կէրթաք, էրկիր

հ՝ըմեն կօլորդիք, հ՝ըմալ անխելք մ.ւրդ մի գտնաք օր քընց զէնի էլ անխելք մարդ չէզնի իգա էրկրի մեջ։

Էդ հինգ մարդ էլան գացին էրկիր օլրդան, հարցրցին, փորձեցին. սալախ տվեցին, թե ֆիլան սարի գլուխ հովիվ մը կա, օր ըսկի էն սարի գլխեն չիջեր է, մարդու մեջ չի մտեր է, քաղաք չը-տեսեր է, գեղ չտեսեր է, քընց զէնի անխելք մարդ էդ էրկրի մեջ էլ չգտնվի։

Էդ մարդիկ հ՝էլան գացին սարի գլուխ, էդ հովրվի մոտ, ասին.

— Բարև՛, հովիվ ախպեր։

— Աստծու բարին, ախպըրտա՛նք, դուք բարով էք էկեր,—զուր կուլաբ փռեց գետին,—ախպրտանք, հրամեցեք, նստեք վրեն։

Էկողներին ըսեց.—Ախպըրտա՛նք, բարով եք էկեր, իշալլահ, խե՞ր է ձըր գալ։

Մարդիկ վերցրին ըսեցին.—Վալլա՛, ախպե՛ր, խեր ու շատ-ը՝նք գինա, մենակ էկեր ինք զքըզի պըտի տանինք։

— Հ՝որի՞ կտանիք գիս, հ՝ո՞ւր կտանիք։

— Թագավոր ուր քաղքի բոլոր բադանք կշինե, իրեք անգամ շինեց, իրեք անգամ լէ լուսումութ հ՝էլան տեսան օր բլեր է։ Թա-գավորի խելոք մարգերն ըսեցին, թե անխելք մարդ մը օր քընց զէնի անխելք չէղի, գտնաք, բերիք էդ բադնի դարգի շեմքի վրեն մատղիք, ըդրա արուն թափեք հըմքի ըռքի քարերու վրեն ու ղրադ-ներ շինեք վրեն, էլ չբլի։ Մըկա մընք իգա էրկիր հ՝ըմեն օլորդանք, զքըզի սալախ տվեցին անխելք, էկեր ինք զքըզի տանինք օր մատ-ղինք։

— է՛, ախպեր, էկիր իք, բարով իք էկեր, իդա հ՝իրկուն մա-ցեք իդա տեխ, հարի լուսուն աստված օղորմած է։

Հ՝իրկուն էր, հովիվ բերեց օշխար մի մորթեց, ըդրանց բերեց կերցուց, խմցուց։ Լուսումութ էլան, էլման ըդրանց հաց քաշից կերցուց, խմցուց։

— է,—ըսեց.—ախպրտանք, դուք ըդ տեխ կանեք, ես բան մը պըտի ձեզի ըսիմ։

Գնաց մաքիմ՝ առավ էկավ։

— Ախպրտա՛նք,—ըսեց,—իդա մաքին հղի՞ է, թե՝ ստեռջ է։

Մարդիկ ըսին.—Հովի՛վ ախպեր, վալլա, չընք գինա, թե էդ մաքին հղի է, թե՝ ստեռջ է։

Ըսեց.—Ախպրտանք, էդի հղի է. ըդրա գառ սպիտակ է, դըմկի-

ծեր սև նշան մի կա ու սև նշանմ՝ լէ ճակտի վրեն կա։ Գառ լէ օրձ է։

Ըսեց ու մաքին զարկեց գետին, պատռեց զմաքու փոր, գառ հանեց միջեն։ Մարդիկ տեսան օր գառ ճիշտ մարդու ըսածին պեսն էր, իմալ օր հովիվն ըսեց։

Հովիվ էլավ գնաց ուրիշ մաքիմ՝ լէ բերեց, ըսավ.—Ախպըրտանք, ըդրան ի՞նչ կասիք, հըղի՞ է, թե՝ ստեղշ։

Մարդիկ ըսին.—Վալլա՜, ախպե՛ր, մինե բան մի բալի չէնե, նե՛ ստեղշն գինանք, նե՛ հղին։

Հովիվն ըսեց.—Ախպրտանք, էդի ջուխտ գառ ունի ուր փորի մեջ. մեկ օրձ է, մեկ էգ է։ Օրձ սև է, էգը՝ կարմիր է։ Էդ սևին սիվտակ նշան դըմկի ծերն է, մեկ լէ՝ ճակտին։ Կարմրին լէ աջ հ՝առջին օտք ու հետին օտք սպիտակ է։

Ջարկեց մաքին ի գետին, մորթեց, փորը պատռեց, ջուխտակ գառ հ՝էլավ միջեն։

Ըսեց.—Ախպրտանք, էկեք իշեք ըդրանց նշաններ իմ ըսածին պեսն է, թե՝ ուրիշ չեշիտ է։

Մարդիկ էկան, աղեկ մի իշեցին, տեսան.—Ախպե՛ր,—ըսին,—նշաններ հ՝ըմալ ին, ինչ օր դու ասիր։

— Է՜, ախպեր,—ըսավ,—դուք իդա խդար էրկիր օլորդեր իք, իմ պես գիտուն հովիվ, ըսկի տեսե՞ր իք։

Մարդիկ ըսեցին.—Ախպե՛ր, մենք քըզի պես գիտուն հովիվ ըսկի չընք տեսեր ինք։

Ըսեց.—Ախպրտանք, օր հըմալ է, ես անխելք չիմ, ես իմ սանաաթի մեջ քընց ղըմեն խելքով իմ։ Գացեք ձըր համար անխելք մարդ գտեք, տարեք։

Մարդիկ ըսին.—Հապա՜, մենք հ՝ո՞ւր էրթանք օր անխելք մարդ մը գտնանք։

Հովիվն ըսեց.—Յավա՜շ, ես ձըզի աղեկութեն մը լէ էնիմ։

Ասին.—Ասա՜ տեսնանք։

— Ես լսեր իմ օր ձեր թագավոր ուր սադրազամի տարին օր թամամ էզնի, զէն սադրազամ կսպանե, զմալ լէ կտանե ուրին, զկընիկ լէ, հ՝ըմա՞լ է։

— Հա՜, հ՝ըմալ է։

— Օր հ՝ըմալ է, գացեք ձըր թագավորին ըսեք թող շարջի մի խտա կանչել, թե. «Որն օր լուսումութ շուտ էկավ իմ բակի մեջ կանավ, զէնի կէնիմ ընձի սադրազամ»։ Լուսումութ որն օր էկավ

կանավ իր բակի մեջ, քընց զէնի անխելք մարդ չկա, թըղ զընի բըռնե, տանե մատղե։

Մարդիկ հ'էլան շնողքըլան ու ընկան ճամբախ։ Էկան գացին թագավորի մոտ, հովիվ իմալ օր օշխար մորթեց, իմալ օր դառնեբու նշաններ ըսեց, զըմեն թագավորին թարիֆ էրեցին։ Ու դարցան ըսին, թե՝ հովիվ մըզի անխելք մարդ ճարելու ճամբախ լէ ցուցուց։

Հսավ.—Ի՞նչ ճամբախ ցուցուց։

Ըսին.—Հովիվն ըսեց, կէրթաք թագավորին ըսիք, հ'իրկուն ջարջիմ իտա կանչել, թե՝ լուսումութ որն օր շուտ էկավ կանավ իմ բակի մեջ, զէնի կէնիմ ընձի սադրազամ։ Լուսումութ որն օր շուտ էկավ կանավ, քընց զէն անխելք մարդ չըկա. թըղ բռնե մատղե։

Թագավոր լէ հ'իրկուն ավեց ջարջի մի կանչել. «Լուսումութ շուտ որն օր էկավ կանավ իմ բակի մեջ, զէնի կէնիմ ընձի սադրազամ»։

Անխելք մարդ մի զէդ բան օր լսեց, հարի լուա չքնավ։

Լուսումութ շուտ գնաց թագավորի բակի մեջ կանավ. թագավորին ջուհաբ տարան, թե քու ըսած մարդ էկեր է։

Թագավոր հ'էլավ տեսավ օր էդ մարդ կաներ է բակի մեջ, էլ ուրիշ մարդ չկա։

Թագավոր կանչեց սադրազամին.—Ձեր փնտրած մարդ գտանք, առեք տարեք, իմալ կուզեք՝ հըմալ ըրեք։

Սադրազամ էկավ առավ զէդ մարդ, տարավ բաղնի շեմքի վրեն մատղեց, հըմքի ըռքի քարերուն վրեն լէ իրեք-իրեք կաթ արուն տվեց կաթըցնել։ Ու ուատեք էկան զհիմքեր թալեցին շինեցին։

Իրեք տարի թամամ շինեցին, խըլըսավ, դռներ կախեցին վըրեն։ Թագավորին ջուհաբ տվեցին, թե.—Խըլըսավ բաղներ։

Թագավոր ըսեց.—Շատ աղեկ, թե հըրի լուսուն չըլավ, ղաթի աղեկ, օր բլավ՝ զէն գիտուն հովվի գլուխ լէ կզարկիմ։ Լուսուն էլան տեսան օր բաղներ չըլեր ա։

Թագավոր կանչեց զէն գիտունին ու զէն հովվին աղեկ մի խըլաթից ու ճամբից։